

796(062)



409

U.G.A.  
UNION GÉNÉRALE ARMÉNIENNE

HOMENETMEN

**Ն.Մ.Ը.Մ.**

ԲԱՅ՝ ՄԱՐՄՆԱԿՐԹԱԿԱՆ ԸՆԴԳԱՆՈՒՐ ՄՈՒԿԹԻՒՆ  
• ԲԵՄԵՍԱԼ 1918 ԻՆ •

Հ Ա Մ Ա Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ե Ա Ն  
Ո Ղ Ի Մ Պ Ի Ա Կ Ա Ն

1956 - ԵՐԵՒԱՆ

# Ե Ր Կ ՈՒ Խ Օ Ս Ք

Հ.Մ.Ը.Մ.ի Ֆրանսայի Շրջանային Վարչությունը մեր Հայրենիքի մարզական կեանքին ընդհանրապես եւ մասնատրաքար վերջերս տեղի ունեցած ողիմպական խաղերուն մանրամասն եւ շատ հետաքրքրական տեղեկատուութիւն մը ստացաւ :

Պարտականութիւն կը սեպենք այդ ընդարձակ տեղեկատուութիւնը ամփոփել եւ գրեցնել մը գայն ֆրանսահայ գաղութին ներկայացնել : Վստահ ենք որ ամէն Հայ, երիտասարդ թէ տարիփոտ, պիտի հրնուի մարզական գետնի վրայ մեր երկրի երիտասարդութեան ձեռք ձգած նուանումներով :


Յաջորդիւ համաշխարհային ողիմպիական խաղե-

րուն մեր եղբայրներուն ձեռք ձգած յաջողութիւնները եւս պիտի տանք ի գիտութիւն ֆրանսահայութեան :

Շրջանային Վարչությունը իր անկեղծ շնորհակալութիւնները կը յայտնէ Արտասահմանի հետ Կուլտուրական Կապի Ընկերակցութեան, որ ազնուութիւնը ունեցաւ մեզի յիշեալ տեղեկագիրը ուղարկելու :

Կանխաւ շնորհակալութիւններ ֆրանսահայ գաղութին որ, վստահ ենք, արժանի ընդունելութիւն պիտի ընէ մեր այս ուղղութեամբ ըրած առաջին փորձին :

Հ.Մ.Ը.Մ.ի  
ՖԻՐԱՆՍԱՅԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ



Ֆիզկուլտուրիկներու տողանցքը սպարտակիադայի հանդիսատր բացման օրը




Բարձրագոյն ուսումնական հաստատութիւններու մասնաշաղկապի մարմնամարզութեան մասնակցողները սպարտակիադայի բացման օրը

Ֆիզկուլտուրիկներու տողանցքը



սպարտակիադայի հանդիսատր բացման օրը





Աշխարհի ատլոյեան Հրանտ Շահինեան, վաշժուքիւն կատարելու պահուն



Ռըզորտամէն Լեոնիդ Մեիլիքեան ձիարշաւի պահուն

Սպարտակիադայի մանակից



Ե. Նազարեան




Լուդորդներ  
Ի. Կիպրիդիսը և Ն. Սարգսեանը



Ագրոպարիք վաշժուքիւններ





Աշխարհի շամբիոն Ալբերտ Ագարեան օդակներու վրայ վարժութիւններ կատարելու պահուն



Այս տարի, Յունիսի 24-ն մինչև 28-ը տեղի ունեցան Երևանի մէջ համաշխարհատանեան ոլիմպիական խաղերը:

Այս մարզահանդէսը իր շուքովը, ստեղծած խանդավառութեամբ եւ երևան բերած արդիւնքներով, մասնաւոր տեղ մը կը զբաւէ մեր Հայրենիքի մարզական պատմութեան մէջ:

Հանդէսէն ամիսներ առաջ արդէն դանդաղան շրջան-



Հանդիպում պոֆսի վարպետ Հենրիկ Գասպարեանի (Երևան) եւ վարպետ Աղամեանի միջև (Կիրովական)



Համաշխարհատանեան ոլիմպիական

## ՀԱՄԱՀԱՅԱՍՏԱՆԵՍ

ներու եւ քաղաքներու մէջ տեղի ունեցան նախնական մրցումները, բնութեւն համար վերջնական մրցումներուն մասնակցող խումբերը եւ անհատները տարրեր մարդերու մէջ:

Մրցումներուն մասնակցած են երեք հազար երկուսասարդներ Երևանի տարրեր մարզադաշտերուն վրայ:

Ամէնէն կարեւոր ելուցիւնները տեղի ունեցան պետական մարզադաշտին վրայ ուր 40-000է աւելի հանդիսատեսներու ներկայութեամբ տեղի ունեցաւ բացումը հինգ հազար մարդիկներու փառահեղ տոգանցքով: Կառավարական ջերմ ողջոյնները բերաւ Ա. Քոչինեան, Մինիստրներու Սովետի նախագահը:

Այս յօդուածին սահմաններուն մէջ կարելի չէ արդիւնքներու լրիւ գեկուցումը ներկայացնել. մենք պիտի ծանրանանք ամէնէն աչքատու մրցումներուն վրայ:

Նշանակելի է որ Ոլիմպիականին իրենց մասնակցութիւնը բերին ոչ միայն տեղական շախմատիչով արժէքներ, այլ համաշխարհային ախոյեաններ ինչ որ մեծ պատիւ մըն է մեր ժողովուրդին համար:


Մասնաւորաբար մեծ խանդավառութիւն ստեղծեցին մարմնամարզական դանդաղան ձեւերու մրցումները որոնց յատուկ փայլ մը տուին իրենց ելուցիւններով Հրանտ Ծաֆինեան եւ Ալպեր Ագարեան:

Առաջնութեան արժանացաւ Հրանտ Ծաֆինեան, 114,6 միւտրով, իսկ Ալպեր Ագարեան միայն երկու տասներորդով եւ մնաց, զբաւելով երկրորդ տեղը:

Հետաքրքիր է նշել, որ օդակներու մարդին մէջ, Ծաֆինեան առաջ անցաւ իր ահեղ հակառակորդէն որ համաշխարհային ախոյեանն էր այդ ճիւղին մէջ:

Գունտ նետելու մէջ հանդէս եկաւ Վ. Յովսէփեան ականաւոր մարդիկը, ախոյեան Սովետական Միութեան, որ երրորդ փորձին գերազանցեց իր նախկին ռիզորը 17 մ. 28 սանթիմէթը նետելով: Գիտենք որ վերջերս Պուքրէշի մէջ իր ռիզորը 17 մ. 40 սանթիմէթի հասցուց:

Համառօտ կերպով կը ներկայացնենք քանի մը ուրիշ արդիւնքները:—



24-28 Յունիս 1956 Երևանի մէջ

# ՆՈՂԻՄՊԻԱԿԱՆԸ

## Բոնցֆամարտ

Թեթև քաշ, Գէորգեանը յաղթեց Յարութիւնեանի, Բիօֆ-ուրոյ: Վարպետ Վ. Ենդերբեան, Եւրոպայի ասոյեանը, յաղթեց Կարս Կիտիկեանի:

Իրենց քաշի համեմատ յաղթական դուրս եկան Թովմասեանը, Ուղայովը, Գասպարեանը, Սարգսեանը, Կարապետեանը եւ մարզանքի վարպետներ Յովհաննիսեանը, Ջանեբեանը եւ Մարտիրոսեանը:

Սկաւառակ.— Ատաջին Վ. Յովսէփեան, 49 մեթր 12 ասնթիթեթրով:

100 մեթր.— Ատաջին Վ. Պելեան՝

Զիարշաւ.— Ախոյեան Լ. Մելիքեան:

Գասական ըմբշամարտ.— Յամաս սրայբարէ յետոյ յաղթողներ հանդիսացան՝ Յակոբեան, Խաչատրեան, Աբրահամեան եւ Մխիթարեան:

Խանութեան բարձրացում.— Կիսաթեթև քաշի մէջ ատաջին հանդիսացաւ ասոյեան Զիւրիկիւրեան:

Սուսերամարտ.— Խմբական մրցում՝ ատաջին Երևանի խումբ: Անձնական մրցում՝ ատաջին Ջահակեան որ յաղթեց փորձուած սուսերամարտ Եղեկեւելեանի: Կանանց մէջ ատաջին՝ Կ. Ասրանեան:

Վոլէյ-պոլ.— Երևանի երկրորդ խումբը յաղթեց ատաջին խումբին:

Թենիս.— Խմբական խաղ՝ Երևանի ատաջին խումբը յաղթեց երկրորդին: Անձնական խաղ՝ Ռաֆայելեան յաղթեց Վ. Գրիգորի:

Հեծանիւ.— Ախոյեան Հրանտ Յակոբեան:

Տեղի ունեցան նաև պասկէթ-պոլի, սանապունդի, լողի, հրձուգութեան, ջուրի մէջ ցատկելու, եւայլն մրցումներ:

Յունիսի 28ին Հայ Ֆիլարմոնիայի համերգային մեծ դահլիճին մէջ տեղի ունեցաւ եզրափակիչ երեկոն:

Մրցումներու արդիւնքներու մասին զեկուցող ուղեւորականի զլխաւոր զտատար Օղանովը նշեց որ

Հեծանիւի գծով հանրապետութեան շամբիոն Հրանտ Յակոբեան




բարձրացած է մարզական մակարդակը Սովետական Հայաստանի մէջ:

Լաւագոյն մարզիկներէն կազմուելիք խումբը որ պիտի մեկնի Մոսկուայի ոլիմպիականին մասնակցելու, բոլոր հնարաւորութիւնները ունի նորանոր յաղթանակներով հայ փողովուրդի մարզական պատիւը պաշտպանելու այդ Համաժողովեանական պայքարին մէջ:





1956 թուի դասական ըմբշամարտի հանրապետութեան խումբ մը ակոյեաններ



Ֆիզկուլտուրնիկներու տողանցքը սպարտակիադայի  
բացման օրը

Թենիսի գծով հանրապետութեան ախոյեան  
Ռաֆայէլեան




Հանրապետութեան ախոյեան լուզորդ Լ. Պիլոեան  
(100 մետր երկարութեան)



Չախէն աջ՝ պոֆսի գծով Եւրոպայի ախոյեան Վ. Ենգի-  
բարեան, հինգ ձեւերի գծով ՍՍՌ-Մ ախոյեան Ի. Նո-  
վիկով եւ մարմնամարզութեան գծով աշխարհի ախոյ-  
եաններ Ալբերտ Ագարեան ու Հրանտ Շահինեան, վեր-  
ջին երկուքը ոսկի մէտալլ շահեցան Մեկպուրնի համաշ-  
խարհային ողիմպիականին:



Հայկական ՍՍՌ ֆիզկուլտուրայի եւ սպորտի կոմիտէի  
նախագահ Ա. Խաչիկեանը տիպլով եւ քանկագին նուէր  
կը յանձնէ գունդի հրման գծով ՍՍՌ-Մ ախոյեան  
Յ. Յովսէփեանին



Վ. Աբրահամեան 100 մետր վազքի աւարտին

127

---

*BULLETIN GRATUIT* édité par l'Association Française pour la Gestion et le Développement de

————— L'UNION GENERALE ARMENIENNE (U. G. A.) dite HOMENETMENE —————

Siège Social : 32, Rue de Trévisse - Paris-IX<sup>e</sup>

---

Imp. «Le Soleil », 4, Rue Git-le-Cœur, PARIS 6<sup>e</sup>